Funded by the European Union

CPVA

CENTRAL PROJECT MANAGEMENT AGENCY

POLICIJA

LTAID

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՄՓՈՓ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊՐՈՖԻԼ

2024 Թ.

ԵՐԵՎԱՆ 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **3**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ **4**

2024Թ. ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ **5**

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ 5

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 6

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ **10**

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՑԱԾ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐ 11

ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՏԵՂԵԿԱՆՔ 13

ՄՇՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՑԱԾ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐ 13

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ **15**

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ 15

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ 16

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ **18**

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑԱԾ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐ 19

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԵՎ ՓԱԽՍՏԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ 20

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԻՆՔ 20

ՎԵՐԱԴԱՐՁ ԵՎ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ **23**

ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ 23

ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 23

ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ 25

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ **27**

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ **28**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության 2024թ. ամփոփ միգրացիոն պրոֆիլը վերլուծական զեկույց է, որում ամփոփված են միգրացիոն գործընթացների վերաբերյալ առկա վարչական վիճակագրությունը, միգրացիայի կառավարման համակարգի, միգրացիոն քաղաքականության և միգրացիայի բնագավառում միջազգային համագործակցության մասին պատկան մարմինների հաշվետվություններն ու վերլուծությունները:

Պրոֆիլը նպատակ ունի քաղաքականություն մշակողներին, հետազոտողներին և միգրացիայի ոլորտով հետաքրքրված այլ մասնագետներին արդիական տեղեկատվություն տրամադրել հիմնական միգրացիոն միտումների, ինչպես նաև միգրացիոն օրենսդրության և քաղաքականության նշանակալի զարգացումների մասին:

Զեկույցը պատրաստվել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանում իրավապահ մարմինների և անվտանգության ոլորտի բարեփոխումներին» ծրագրի աջակցությամբ, որի համար ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունն իր շնորհակալությունն է հայտնում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պաշտոնական անվանումը	**Հայաստանի Հանրապետություն (ՀՀ), կարճ՝ Հայաստան**
Դրոշը	
Տարածքը	29,743 քառ. Կմ
Մայրաքաղաքը	**Երևան**
Պետական սահման	Հյուսիսում՝ Վրաստանի հետ, արևելքում ՝ Ադրբեջանի հետ, արևմուտքում և հարավ-արևմուտքում ՝ Թուրքիայի հետ, հարավում՝ Իրանի հետ
Պետական լեզու	Հայերեն
Բնակչությունը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	**3,075,800**
Էթնիկ կազմ	Հայեր (98,1%), եզդիներ, ռուսներ, ասորիներ, ուկրաինացիներ, քրդեր, հույներ, հրեաներ, վրացիներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ
Ազգային արժույթ	ՀՀ դրամ
ՀՆԱ 2024թ.	**10.1 տրիլիոն ՀՀ դրամ** (25.8 միլիարդ ԱՄՆ դոլար)

2024Թ. ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Ինչպես 2023, այնպես էլ 2024 թվականին միգրացիոն գործընթացների վրա էական ազդեցություն է շարունակել ունենալ ռուս-ուկրաինական պատերազմը, և դրանով պայմանավորված՝ փախստականների և միգրանտների հոսքը Հայաստան, թե՛ Ուկրաինայից, և թե՛ Ռուսաստանից: Մյուս կողմից, 2024 թվականին ամբողջ ծավալով գործարկվել են 2023թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի բնակչության հանդեպ սանձազերծված ագրեսիայի հետևանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Հայաստանում ապաստան գտած բնակչության հաշվառման և փաստաթղթավորման համար ներդրված գործիքակազմերը:

Միգրացիոն հոսքերի ծավալների և միգրացիայի մնացորդի վերաբերյալ պաշտոնական գնահատականներ դեռ չկան և հասանելի չեն լինի առնվազը մինչև ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից իրականացվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) 2024թ. արդյունքների ամփոփումն ու հրապարակումը 2026թ.-ին: Միաժամանակ, միգրացիոն միտումների մասին նախնական պատկերացում կարելի է կազմել 2024 թվականի վերաբերյալ հրապարակված որոշ ցուցանիշներից, մասնավորապես՝ սահմանահատումների հաշվեկշռից, բայց առավելապես ՀՀ-ում կացության կարգավիճակ կամ քաղաքացիություն ձեռքբերած օտարերկրացիների թվի դինամիկայից, որը հիմք է տալիս ենթադրելու, որ 2022-2023 թվականների դրական միգրացիոն միտումները պահպանվել են նաև 2024-ին:

Սահմանահատումների հաշվեկշիռը (սալդո) Հայաստանի բոլոր սահմանային անցակետերում գրանցված մուտքերի և ելքերի տարբերությունն է, ներառյալ օտարերկրացիների և ՀՀ քաղաքացիների հոսքերը, անկախ ուղևորության տևողությունից և նպատակից:

Միգրացիայի մնացորդը էմիգրանտների և իմիգրանտների տարբերությունն է (ըստ ՄԱԿ-ի սահմանումների), որը 2013թ.-ից սկսած հաշվարկվում է ՀՀ վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքներով:

Սահմանահատումներ

Ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների, ՀՀ բոլոր սահմանային կետերով ուղևորահոսքը շատ մոտ էր 2023թ.-ի ծավալին, սակայն մուտքերի և ելքերի սալդոն 2023թ.–ի համեմատ զգալիորեն կրճատվել է՝ կազմելով ընդամենը մոտ -4,000:

Սահմանահատումների տարեկան թվի դինամիկան 2015-2024թթ., հազար մարդ



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

2024թ.-ին պահպանվել է վերջին տասնամյակին բնորոշ միտումը, երբ (բացառությամբ համաճարակային 2020 թվականի) օտարերկրացիների մուտքերի և ելքերի տարբերությունը դրական է, իսկ ՀՀ քաղաքացիներինը՝ բացասական: Միաժամանակ, 2023-ի համեմատ ՀՀ քաղաքացիների մուտքերի և ելքերի բացասական սալդոն կրճատվել է գրեթե 2.5 անգամ:

Սահմանահատումների սալդոն 2015-2024թթ. ըստ քաղաքացիության երկրի



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Նպատակ ունենալով շարունակաբար բարեփոխել միգրացիայի կառավարման համակարգն այն ավելի քաղաքացիակենտրոն և արդյունավետ դարձնելու համար, 2024թ. -ին մշակվել և շրջանառվել են մի շարք կարևոր օրենսդրական նախաձեռնություններ, որոնց ընդունումը նախատեսվում է 2025թ. -ին:

Մասնավորապես, շրջանառվում է **«Օտարերկրացիների մասին»** օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծերի փաթեթը, որի ընդունման արդյունքում, ի թիվս այլնի, կապահովվեն Հայաստանի Հանրապետությունում բնակվող օտարերկրացիների ամբողջական հաշվառումը, նույնականացումը և նրանց հասանելիությունը քաղաքացիներին մատուցվող ծառայություններին, ինչպես նաև կպարզեցվեն և կհստակեցվեն Հայաստանի Հանրապետությունում ներդրումներ իրականացնելու և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու

մտադրություն ունեցող օտարերկրացիների օրինական կացության կազմակերպման գործընթացը:

Նախագծերի ընդունումից հետո ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը (ՄՔԾ) պետք է մշակի և ներդնի միասնական էլեկտրոնային հարթակ, որի կիրառմամբ օտարերկրացիներին տրվելու է ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ, իրականացվելու է պետական մարմինների, գործատուների, ուսումնական հաստատությունների, քաղաքացիների և օտարերկրացիների միջև հաղորդակցությունը, ինչպես նաև իրականացվելու է հատուկ կացության կարգավիճակ ստանալու համար դիմած օտարերկրացիների տվյալների հաշվառումը: Նախագծերի փաթեթով ներդրվել է նաև աշխատանքային վիզայի հասկացությունը, վիզայի տրամադրման հիմքերը, նպատակներն ու ժամկետները, ինչպես նաև վիզայի այդ տեսակի համար համապատասխան պետական տուրքը:

«ՀՀ քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի ընդունման արդյունքում կթվայնացվեն քաղաքացիություն ստանալու և քաղաքացիությունը դադարեցնելու գործընթացներում մատուցվող ծառայությունները, կապահովվի վարույթի էլեկտրոնային եղանակով իրականացումը, ինչի արդյունքում էականորեն կբարելավվի քաղաքացիության շնորհման և դադարեցման գործընթացների արդյունավետությունը, կբարձրանա այդ գործընթացների տնտեսական արդյունավետությունը, կխնայվեն ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, կբարելավվի մատուցվող ծառայությունների որակը:

2024թ.-ին մշակվել է **«Փախստականների և ապաստանի մասին» օրենքի** փոփոխությունների փաթեթը, որը միտված է ապաստանի ոլորտում օրենսդրական դաշտի լավարկմանը: Մասնավորապես՝ առաջարկվող բարեփոխումների արդյունքում նախատեսվում է ունենալ, ի թիվս այլնի, միջազգային պաշտպանության հստակ ձևեր, որոնք ներառում են ոչ միայն փախստականներին ապաստան տրամադրելը, այլև չվերադարձելիության սկզբունքից օգտվող օտարերկրացիների պաշտպանություն, «փախստական» հասկացության տարրերի առավել հստակ բնորոշում, ապաստանի մերժման հստակ և կանխատեսելի հիմքեր, ապաստան հայցողների սոցիալական աջակցության արդարացի ընթացակարգեր, իրավաբանական օգնություն ստանալու՝ ապաստան հայցողների իրավունքի ապահովման երաշխիքներ, առավել թափանցիկ, հեշտացված և կանխատեսելի ընթացակարգեր և պատճառաբանված որոշումներ, անձնական տվյալների օգտագործման հստակ կանոններ, սահմանին ապաստան հայցողների, քրեական հետապնդման ենթարկվող և հանձման ենթակա օտարերկրացիների, երեխաների իրավունքների երաշխիքներ: Առաջարկվող փոփոխությունները միտված են նաև ապաստանի վերաբերյալ օրենսդրությունը Եվրոպական միության իրավական համակարգին առավելագույնը մոտարկելուն: Մասնավորապես՝ նախագծերով առաջ քաշված մի շարք բարեփոխումների հիմքում ընկած են ապաստանի ոլորտում Եվրոպական միության հրահանգներով սահմանված դրույթները, որոնք ձևավորվել են միջազգային լավագույն փորձի ամփոփման արդյունքում:

Մշակվել է **պետական մարմիններում էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման կարգի** մասին ՀՀ կառավարության 25.05.2017թ. թիվ 572-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որի ընդունման

արդյունքում ստեղծվում է իրավունքների իրացման համապատասխան իրավական հիմք, հնարավորություն և միջավայր այն անձանց համար, ովքեր ունեն կացության կարգավիճակի քարտ կամ ՀՀ-ում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք, նույնականացվել ՀՀ կողմից և ստանալ Mobile ID, որը հնարավորություն կտա օգտվել պետական առցանց ծառայություններից:

Մշակվել է նաև **«Բնակչության ռեգիստրի մասին»** նոր օրենքի նախագիծը, որի ընդունումը նպատակադրված է մեկ միասնական տեղեկատվական համակարգում մեկտեղելու բնակչության ռեգիստրում ներառման ենթակա տվյալները: Պետական մյուս մարմիններն իրենց գործառույթների իրականացման համար կօգտնվեն բնակչության ռեգիստրից, ինչը հնարավորություն կտա ապահովել պետական կառավարման համար ռեսուրսների ճիշտ պլանավորումը, արդյունավետ պետական կառավարումը, որակյալ ծառայությունների մատուցումը, անձանց իրավունքների պաշտպանությունը, այդ թվում՝ ազատ տեղաշարժվելու, բնակության վայր ընտրելու և անձի՝ ըստ բնակության վայրի հաշվառվելու իրավունքի իրացումը:

2024-ին կատարվել է ծառայությունների թվայնացման օրակարգի շրջանակներում գործարկված **workpermit.am**՝ օտարերկրացի աշխատողի ներգրավման միասնական էլեկտրոնային հարթակի UI/UX ամբողջական վերանայում, մշակվել և ներդրվել է օգտատերերի հարցումների հիման վրա ձևավորված նոր ինտերֆեյս: Բարելավվել է ծանուցումների ուղարկման համակարգը, մասնավորապես վարչական տուգանքների նշանակման մասով: Փոփոխվել է վարույթների իրականացման տրամաբանությունը, մասնավորապես՝ գործ վարողներին տրվել է որոշում կայացնելու հնարավորություն և ներդրվել է դրական որոշումների դեպքում քարտի ինքնաշխատ գեներացման մեխանիզմ: Էլեկտրոնային ստորագրության սարքերի ներդրման շնորհիվ աշխատանի թույլտվության հիմքով տրամադրված քարտերի ստացականներով փոխանցման գործընթացը փոխարինվել է էլեկտրոնայինով: Տարեվերջին կատարվել է համակարգի գործունեության անկախ աուդիտ և ապագայում շտկման ենթակա թերությունների վերհանում:

«Հայաստանի Հանրապետությունում 2023-2025 թվականների ընթացքում **մարդկանց թրաֆիքինգի** և շահագործման դեմ պայքարի ազգային ծրագրի» շրջանակներում 2024թ.-ին շարունակվել են մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները, որոնք գլխավորապես վերապահված են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (ԱՍՀՆ):

2024 թվականի օգոստոսի 1-ի Կառավարության թիվ 1171-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել 2015 թվականի հուլիսի 30-ի Կառավարության թիվ 851-Ն որոշման մեջ՝ սահմանելով գործընկեր ոչ կառավարական կազմակերպությունների ընտրության և նրանց ներկայացուցիչների՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնականացման հանձնաժողովում ընտրության նոր կարգ:

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի շրջանակում ԱՍՀՆ-ն 2024 թվականին շարունակել է իրականացնել զոհերի պաշտպանության և վերաինտեգրման ծրագրերը: Թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց աջակցությունը ներառում է ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնման համալիր միջոցառումներ, որոնք իրականացվում են նախարարության կողմից լիազորված

կազմակերպությունների միջոցով: 2024թ. -ին ԱՍՀՆ-ի աջակցություն են ստացել ոչ միայն պաշտոնապես ճանաչված 25 զոհեր, այլև 18 հնարավոր զոհեր, որոնք գտնվում էին թրաֆիքինգի կամ շահագործման վտանգի տակ:

2024թ. կարևորագույն իրադարձություններից էր **ԵՄ-ի հետ վիզաների ազատականացման երկխոսության** մեկնարկը: Վիզաների ազատականացման երկխոսությունը ԵՄ-Հայաստան հարաբերությունների ավելի լայն շրջանակի մաս է կազմում, որը զգալի առաջընթաց է գրանցել 2017 թվականին ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) ստորագրումից ի վեր: Իրականացվող քննարկումները և ԵՄ տեխնիկական առաքելությունները պետք է հանգեցնեն Վիզայի ազատականացման գործողությունների ծրագրի (VLAP) մշակմանը:

Այլ երկրների հետ մշակված և իրականացված VLAP-ները ներառել են չորս առաջնային ոլորտներ.

- ✓ Փաստաթղթերի անվտանգություն, ներառյալ կենսաչափական փաստաթղթեր
- ✓ Սահմանների համապարփակ կառավարում, միգրացիայի կառավարում և ապաստանի հետ կապված հարցեր
- ✓ Հանրային կարգի և անվտանգության պաշտպանություն
- ✓ Արտաքին հարաբերություններ և մարդու հիմնարար իրավունքներ:

Գործընթացի արագությունն ու արդյունավետությունը մեծապես կախված են այս հիմնական ոլորտներում և գործողությունների ծրագրում նշված հանձնառությունների հաջող իրականացումից: Այս միջոցառումներն ուղեցույց կհանդիսանան ՀՀ ներքին գործերի նախարարության, հատկապես միգրացիոն կառավարման ոլորտի արդիականացման համար: Գործընթացի հաջող իրականացման և գնահատման արդյունքում Հայաստանի քաղաքացիները կստանան առանց վիզայի մուտքի հնարավորություն դեպի ԵՄ երկրներ՝ Հայաստանի կենսաչափական անձնագրեր ունեցող քաղաքացիներին ընձեռելով Շենգենյան գոտի առանց վիզայի 90 օրյա ճանապարհորդության հնարավորություն՝ 180 օրվա ընթացքում:

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2024թ. ընթացքում Հայաստանում կացության կարգավիճակ և բնակվելու օրինական իրավունք է ստացել 14,513 օտարերկրացի, ինչը գրեթե նույնական է 2023թ. ցուցանիշին:

ՀՀ-ում կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվը



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

Օտարերկրացիների կացության կարգավիճակներն ըստ ՀՀ օրենսդրության

Համաձայն «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ի կետ 1-ի օտարերկրացիների համար սահմանվում են կացության հետևյալ կարգավիճակները. **ա) ժամանակավոր, բ) մշտական, և գ) հատուկ:**

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ տարի և ավել ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ:

Այդպիսի հանգամանքներ կարող են լինել՝

- ✓ ուսումը,
- ✓ աշխատանքի թույլտվության առկայությունը,
- ✓ ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը լինելը,
- ✓ ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) լինելը,
- ✓ ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը,
- ✓ օրենքով սահմանված կարգով կնքված կամավոր աշխատանքի մասին պայմանագրով կամավոր աշխատանք կատարելը
- ✓ ազգությամբ հայ լինելը:

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է մինչև 1 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 1 տարով երկարաձգելու հնարավորությամբ:

Մշտական կացության կարգավիճակը տրվում է օտարերկրացուն, եթե նա՝

- ✓ ապացուցում է Հայաստանում ՀՀ քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող ամուսնու կամ մերձավոր ազգականների (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) առկայությունը, ՀՀ-ում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով և մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելն օրենքով սահմանված կարգով առնվազն երեք տարի բնակվել է ՀՀ-ում,
- ✓ ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը,
- ✓ ազգությամբ հայ լինելը:

Մշտական կացության կարգավիճակը տրվում է 5 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ:

Հատուկ կացության կարգավիճակը շնորհվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի կարգադրությամբ ծագումով հայ օտարերկրացիներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների: Այն տրվում է տասը տարի ժամկետով:

Բացի այդ, 2022 թվականի հունվարի 1-ից գործող նոր կարգավորումներով **ՀՀ-ում աշխատող ԵԱՏՄ անդամ պետությունների քաղաքացիներն ու նրանց ընտանիքի անդամները կարող են** աշխատանքային պայմանագրի տևողության ժամկետով (կամ անժամկետ պայմանագրերի դեպքում՝ մեկ տարով) **ստանալ բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք:**

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՑԱԾ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐ

Ինչպես 2023թ.-ին, 2024թ.-ին ևս ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ստացածների մեծամասնությունը Հնդկաստանի, Իրանի և Ռուսաստանի քաղաքացիներ էին: Միաժամանակ, Հնդկաստանի քաղաքացիների մասնաբաժինը որոշակիորեն նվազել է՝ պայմանավորված անօրինական միգրացիայի կանխարգելմանն ուղղված օրենսդրական փոփոխություններով, որոնցով Հնդկաստանի քաղաքացիների ՀՀ մուտքի վիզա ստանալու պահանջները խստացվել են:

ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվն ըստ քաղաքացիության երկրի



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

Ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թվում շարունակել է աճել աշխատանքի հիմքով կարգավիճակ ստացածների մասնաբաժինը՝ 2024թ. կարգավիճակ ստացածների գրեթե կեսին կարգավիճակը տրվել է ՀՀ-ում աշխատանքի հիմքով:

ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվն ըստ կարգավիճակի հիմքի



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

2022 թվականի հունվարի 1-ից Հայաստանում գործարկված Օտարերկրացի աշխատողի ներգրավման workpermit.am միասնական էլեկտրոնային հարթակը հնարավորություն է տալիս դիմումները ներկայացնել առցանց և այս գործընթացում ներգրավված բոլոր պետական մարմինների համար ապահովում է միաժամանակյա հասանելիություն՝ կրճատելով գործընթացի վրա ծախսվող ժամանակը և բարելավելով վարչարարությունը:

Հարթակի միջոցով **աշխատանքի թույլտվության և ժամանակավոր կացության կարգավիճակ** ստանալու նպատակով դիմել է 100 երկրի 5,560 քաղաքացի: Դիմումատուների մեծամասնությունը Հնդկաստանի և Իրանի քաղաքացիներ էին:

2024թ.-ին աշխատանքի թույլտվություն և դրա հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու դիմումներն ըստ դիմումատուների քաղաքացիության երկրի



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

2024 թվականին աշխատանքի թույլտվություն և դրա հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ է տրամադրվել 4115 օտարեկրացու, մերժվել է 2114 դիմում, կարճվել՝ 526-ը:

ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՏԵՂԵԿԱՆՔ

2024թ. ընթացքում workpermit.am հարթակի միջոցով ներկայացվել է ԵԱՏՄ անդամ պետության քաղաքացիներին և նրանց ընտանիքների անդամներին տրամադրվող ՀՀ-ում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանքի տրամադրման 8,331 դիմում, բավարարվել՝ 8,028 դիմում: Նախորդ տարիների պես, դիմումների ճնշող մեծամասնությունը ստացվել են Ռուսաստանի քաղաքացիներից:

2024թ.-ին ՀՀ-ում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանքի տրամադրման՝ ԵԱՏՄ երկրների քաղաքացիներից ստացված դիմումներն ըստ դիմումատուների քաղաքացիության երկրի



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

ՄՇՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՑԱԾ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐ

2024թ. -ին ՀՀ-ում մշտական կացության կարգավիճակ ստացածների ճնշող մեծամասնությունը Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ էին, թեև 2023թ. -ի համեմատ վերջիններիս մասնաբաժինը շուրջ 5 տոկոսային կետով նվազել է: Ինչպես 2022-2023թթ.-ին, այնպես էլ 2024թ. -ին մշտական կացության կարգավիճակ ստացածների թվում նշանակալի, թեև անհամեմատ փոքր, մասնաբաժին են ունեցել Վրաստանի, Իրանի և Ուկրաինայի քաղաքացիները:

ՀՀ-ում մշտական կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվն ըստ քաղաքացիության երկրի



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

2024թ.-ին մշտական կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների մեծամասնությունը (շուրջ 68%) կարգավիճակը ստացել է ազգությամբ հայ լինելու հիմքով:

ՀՀ-ում մշտական կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվն ըստ կարգավիճակի հիմքի



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

ՀՀ քաղաքացիություն ստանալու համար դիմող օտարերկրացիների թիվը 2024թ.-ին շարունակել է աճել: Եթե 2023թ. -ին դիմումների ընդհանուր թիվը շուրջ 19,000 էր, ապա 2024թ. -ին՝ շուրջ 21,500: Միաժամանակ 2024թ. -ին ՀՀ քաղաքացիություն ստացածների ընդհանուր թիվը գրեթե նույնական է նախորդ տարվա ցուցանիշին՝ մոտ 21,000:

2018-2024թթ. ՀՀ քաղաքացիություն ստացած և քաղաքացիությունը դադարեցրած անձանց թվի դինամիկան



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

2024 թվականին ՀՀ քաղաքացիություն ստանալու համար հիմնականում դիմել են Ռուսաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Սիրիայի, Լիբանանի և Իրանի քաղաքացիները:

ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման կարգը

Համաձայն ՀՀ քաղաքացիության մասին օրենքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած և գործունակ յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու **ՀՀ քաղաքացիություն ստանալու համար**, եթե նա օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում, կարող է բացատրվել հայերեն լեզվով և ծանոթ է ՀՀ Սահմանադրությանը:

Նույն օրենքի համաձայն, պարզեցված կարգով՝ առանց վերջին 3 տարին Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու և հայերեն լեզվի իմացության պահանջների պահպանման՝ ՀՀ քաղաքացիություն կարող է ստանալ ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձը,

- ✓ որը մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը ներկայացնելու պահը վերջին երկու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ է գտնվել Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ և այդ երկու տարվա ընթացքում

առնվազն 365 օր օրինական հիմքերի առկայությամբ բնակվել է Հայաստանի Հանրապետությունում կամ ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացի զավակ կամ ծնող,

- ✓ որի ծնողները (կամ նրանցից մեկը) նախկինում ունեցել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, և որը օրենքով սահմանված կարգով վերջին մեկ տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում,
- ✓ որը ծագումով հայ է, այսինքն՝ ունի հայ նախնիներ,
- ✓ որը 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել ՀՀ քաղաքացիությունից:
- ✓ որը Հայաստանի Հանրապետությունում ճանաչվել է փախստական կամ հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձ

Հայաստանի Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած անձանց կարող է շնորհվել ՀՀ քաղաքացիություն առանց վերը նշված բոլոր պահանջների:

ՀՀ քաղաքացիությունը դադարեցվում է ՀՀ քաղաքացիությունը փոխելու, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով:

Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի փոխել քաղաքացիությունը՝ դուրս գալ ՀՀ քաղաքացիությունից և ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու **դիմումը մերժվում է, եթե՝**

- ✓ նրա նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում,
- ✓ նրա նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած և կատարման ենթակա դատավճիռ կամ վճիռ,
- ✓ ՀՀ քաղաքացիությունից նրա դուրս գալը հակասում է ՀՀ ազգային անվտանգության շահերին,

նա ունի պետության, ձեռնարկությունների, կազմակերպությունների կամ քաղաքացիների շահերի հետ կապված չկատարած պարտավորություններ:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

Դեռևս 2021թ. դեկտեմբերին փոփոխություններ են կատարվել «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքում, որով կարգավորել են ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու մասին նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելու հետ կապված հարաբերությունները: Փոփոխության արդյունքում քաղաքացիություն չունեցող անձանց թվաքանակը ՀՀ-ում էապես կրճատվել է: Այսպես, ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի վկայականով փաստաթղթավորված անձանց թիվը 2024թ.-ին հասել է 308-ի, իսկ 2024 թվականի ընթացքում քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ է ստացել ընդամենը 10 դիմումատու:

2024 թվականին մշակվել և շրջանառվել է քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի որոշման համար հստակ ընթացակարգ սահմանող «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկայումս քննարկվում է ՀՀ կառավարությունում:

2018-2024թթ. քաղաքացիություն չունեցող անձանց թվի դինամիկան



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

Հայաստանի կամ որևէ այլ երկրի քաղաքացի չհանդիսացող ցանկացած անձ կարող է դիմել Հայաստանում ապաքաղաքացիության կարգավիճակ ստանալու համար: Դրական որոշման դեպքում ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը դիմումատուին տրամադրում է քաղաքացիություն չունեցող անձի վկայական:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիան և դրան կից 1967 թվականի արձանագրությունը (այսուհետ միասին՝ 1951թ. կոնվենցիա): Հայաստանը մասնակից է նաև մարդու իրավունքների պաշտպանության մի շարք փաստաթղթերի:

«Փախստականների և ապաստանի մասին» ազգային օրենքն ընդունվել է 2008 թվականին, իսկ 2015 թվականին ենթարկվել է էական փոփոխությունների՝ ուղղված միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը: «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում փախստական ճանաչվելու համար 1951 թվականի Կոնվենցիայով ամրագրված հինգ հիմքերի հետ մեկտեղ ամրագրվել են ևս հինգը՝ մարդու իրավունքների զանգվածային խախտումներ, համատարած բռնություն, արտաքին հարձակում, ներքին հակամարտություններ, հասարակական կարգի լուրջ խախտումներ: Այսինքն, այն անձինք, ովքեր ստիպված են եղել լքել իրենց երկիրը վերջին հինգ հիմքերից որևէ մեկի պատճառով:

Փախստականների պաշտպանության ազգային իրավական դաշտը ներառում է նաև «Օտարերկրացիների մասին» օրենքը, Քրեական օրենսգիրքը, Քրեական դատավարության օրենսգիրքը, Քրեակատարողական օրենսգիրքը, Վարչական դատավարության օրենսգիրքը, «Սահմանապահ զորքերի մասին» օրենքը, «Փաստաբանության մասին» օրենքը և մի շարք այլ իրավական ակտեր, որքանով դրանց կարգավորումները տարածվում են ապաստան հայցողների և փախստականների վրա:

Հայաստանը պարտավորվել է մշտապես կատարելագործել իր միջազգային պաշտպանության համակարգը, այդ թվում՝ Փախստականների հարցերով համաշխարհային ֆորումի (Global Refugee Forum) և Եվրոպական միության ու Հայաստանի Հանրապետության միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) պարտավորությունների շրջանակներում: Մասնավորապես, CEPA-ի 14(2)(բ) հոդվածով կողմերը պայմանավորվել են համագործակցել միջազգային պաշտպանության ոլորտում ազգային օրենսդրության և պրակտիկայի զարգացման ուղղությամբ՝ 1951թ. կոնվենցիայի և այլ վերաբերելի միջազգային փաստաթղթերի (ինչպես, օրինակ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան) դրույթների և չվերադարձելիության սկզբունքի երաշխավորման նպատակով:

Փախստականների և ապաստան հայցողների կարիքների հասցեագրումը կարգավորող իրավական դաշտը կատարելագործելու, ինչպես նաև Հայաստանի ապաստանի օրենսդրությունը Եվրոպական միության իրավական շրջանակին ավելի մոտեցնելու նպատակով՝ 2024 թվականին մշակված «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի փոփոխությունների փաթեթով կուժեղացվեն ապաստան հայցողների պաշտպանության մեխանիզմները և կհեշտացվեն դիմումների ներկայացման և մշակման ընթացակարգերը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑԱԾ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐ

2024թ.-ին ՀՀ-ում ապաստան ստանալու խնդրանքով դիմել է 660 օտարերկրացի: 2024թ.-ի ընթացքում փախստական է ճանաչվել և ապաստան ստացել 206 օտարերկրացի, իսկ 185 օտարեկրացու՝ փախստականի կարգավիճակի տրամադրումը մերժվել է:

2018-2024թթ. ՀՀ-ում ապաստանի տրամադրման վիճակագրությունը



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

2024թ.-ին Հայաստանում ամենահաճախը ապաստան են հայցել Ուկրաինայի, Իրաքի, Իրանի, Եգիպտոսի և Ռուսաստանի քաղաքացիները: Միաժամանակ, փախստական ճանաչված և ապաստան ստացած օտարերկրացիների թվում ճնշող մեծամասնություն են կազմել Ուկրաինայի քաղաքացիները:

2024թ. Հայաստանում ապաստան հայցած և փախստական ճանաչված անձանց թիվն ըստ ապաստան հայցողի քաղաքացիության



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԵՎ ՓԱԽՍՏԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2024թ. -ին «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում տեղավորվել է 29 ապաստան հայցող օտարերկրացի: Կազմակերպվել է ՀՀ-ում **ապաստան հայցող**՝ «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում չտեղավորված 89 օտարերկրացիների (39 ընտանիքի) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դրամական օգնության տրամադրում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու նպատակով:

2024թ. ավարտվել են ապաստան հայցողների համար Աբովյան քաղաքում ժամանակավոր տեղավորման 100-120 տեղանոց նոր կենտրոնի շինարարության աշխատանքները: Նոր կացարանի ֆինանսավորումը՝ 1,5 մլն եվրոյի չափով ամբողջությամբ տրամադրվել է դոնորների՝ Դանիայի, Նիդերլանդների և Գերմանիայի կառավարությունների կողմից:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը շարունակել է իրականացնել ՀՀ կառավարության 2022թ. նոյեմբերի 10-ի թիվ 1711-Ն որոշմամբ հաստատված «**ՀՀ-ում փախստական ճանաչված** անձանց բնակարանային ապահովության» ծրագիրը, որի շրջանակներում 2024թ. աջակցություն է տրամադրվել 19 շահառուի:

2024թ.-ին շարունակվել է նաև 2020թ.ին մեկնարկած՝ 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնի տեղահանված և ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման ծրագրի իրականացումը: 2020-2022 թվականների ընթացքում ծրագիրն իրականացվել է Երևան քաղաքում, իսկ 2023 -2024 թվականներին՝ ՀՀ մարզերում: Մարզերում ծրագրի իրականացման շրջանակներում բնակարանի գնման վկայագրեր են ստացել 134 ընտանիքներ, որոնցից 55-ը իրացրել են դրանք գնելով բնակարաններ՝ 17-ը 2023 թվականի ընթացքում, իսկ 38-ը՝ 2024 թվականին: Մարզերում ծրագրի իրականացման համար պետական բյուջեից հատկացվել է 1.4 միլիարդ դրամ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին իրականացված ռազմական հարձակման հետևանքով 115,000-ից ավելի հայեր բռնի տեղահանվեցին իրենց մշտական բնակության երկրից և ապաստանեցին Հայաստանի Հանրապետությունում:

2023թ. հոկտեմբերի 26-ին ՀՀ կառավարությունն ընդունեց 1864-Ն որոշումը, որով ժամանակավոր պաշտպանության տակ վերցրեց բոլոր այն անձանց, ում վերջին հաշվառման հասցեն եղել է Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաև ԼՂ հաշվառում չունեցող, բայց 2023 թվականի սեպտեմբերի 19-ին ԼՂ-ում բնակվող այն անձանց, ովքեր Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվելուց հետո հաշվառվել են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից: Որոշումը տարածվել է ընդհանուր առմամբ 121,063 բռնի տեղահանվածների վրա:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց տարաբնույթ խնդիրները հաղթահարելու ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից իրականացվել և մինչ օրս շարունակվում են հետևյալ ծրագրերը՝

- ՀՀ կառավարության 2023թ. հոկտեմբերի 3-ի N 1675-Լ որոշմամբ հաստատված ծրագիրը, որը նախատեսում է միանվագ դրամական աջակցություն՝ 100,000 ՀՀ դրամի չափով: Ծրագրի մեկնարկը տրվել է 2023 թվական հոկտեմբերին և ավարտվել 2024 թվականի հունվարի 31-ին: Շահառուների թվաքանակը կազմել է 113,646 անձ:

- ՀՀ կառավարության 2023թ. հոկտեմբերի 12-ի N 1763-Լ որոշմամբ հաստատված «ԼՂ-ից տեղահանված անձանց կեցության և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության» միջոցառումը, որի շրջանակներում 2023 թվականի հոկտեմբերից մինչև 2025 թվականի մարտը ներառյալ շահառուներին տրամադրվում է ամենամսյա դրամական աջակցություն՝ 50,000 ՀՀ դրամի չափով: 2024 թվականի դեկտեմբերի դրությամբ ծրագրի շահառու է հանդիսացել ամսական միջինում 104,000 ԼՂ-ից տեղահանված անձ:

- ՀՀ կառավարության 2024 թ. մայիսի 16-ի N 710-Լ որոշմամբ հաստատված «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության» ծրագիրը, որին 2024թ.-ի վերջի դրությամբ դիմել է 1,561 շահառու, որից 700-ի հայտերը հաստատվել են: Հաստատված հավաստագրերից շուրջ 40-ն իրացվել է:

- ՀՀ կառավարության 2024 թ. հունվարի 11-ի N 57-Լ որոշմամբ հաստատված «2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպում և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրում» ծրագիրը: Ծրագրով աջակցություն է տրամադրվում 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց, գործատուի կողմից ներկայացված պահանջներին համապատասխան մասնագիտական հմտություններ, կարողություններ և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար՝ գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղը համալրելու նպատակով: 2024 թվականին նախատեսված էր ծրագիրն իրականացնել 1500 շաառուի ընդգրկմամբ: Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների կողմից ծրագրում ընդգրկված անձանց թիվը կազմել է 1800, որից 27-ը՝ մասնագիտական ուսուցման բաղադրիչով, 1746-ը՝ աշխատանքային փորձի ձեռքբերման, իսկ 27-ը՝ մասնագիտական ուսուցման և աշխատանքային փորձի ձեռքբերման բաղադրիչի շրջանակներում:

- Միջազգային և հասարակական կառույցների գործընկերների հետ համատեղ ձևավորվել է Պաշտպանության հարցերով զբաղվող աշխատանքային խումբ (Protection Working group): Աշխատանքային խումբն ունի տարբեր ենթախմբեր, որոնց թվում է նաև Գենդերային հիմքով բռնության կանխարգելման ենթաաշխատանքային խումբը: Ենթաաշխատանքային խումբը համանախագահվել է ՄԱԲՀ-ի և ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ սերտ համագործակցությամբ: Ենթաաշխատանքային խմբի գործունեության շրջանակում որոշում է կայացվել ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում նախարարության վերահսկողության ներքո գործող ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնները վերամասնագիտացնել ԼՂ-ից բռնի տեղահանված կանանց և աղջիկների համար «Ապահով

տարածքների» և առաջնային խորհրդատվական, հոգեբանական, սոցիալական, իրավաբանական, ինչպես նաև տնտեսական հզորացման ծառայություններ մատուցել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կանանց և աղջիկներին:

- ✓ 2024 թվականին դրամաշնորհի պայմանագրով՝ պատվիրակման միջոցով հասարակական կազմակերպությունները «Երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում ԼՂՀ-ից բռնի տեղանված 1,000 երեխայի տրամադրել են սոցիալ-հոգեբանական ծառայություններ:

- ✓ 2024 թվականին «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների տրամադրում» ծրագրի շրջանակում ԼՂՀ-ից բռնի տեղահանված շուրջ 240 տարեց և հաշմանդամություն ունեցող անձինք ընդգրկվել են տարբեր միջոցառումներում:

ՎԵՐԱԴԱՐՁ ԵՎ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

Ռեադմիսիոն համաձայնագրերի նպատակն է հեշտացնել պայմանավորվող կողմերի պետությունների տարածքում օրինական գտնվելու հիմքեր չունեցող անձանց վերադարձը իրենց ծագման, կամ իրենց վերջին բնակության երկիր: 2002թ.-ից ի վեր Հայաստանն ակտիվորեն ներգրավվել է հետընդունման ռեադմիսիոն համաձայնագրերի կնքման գործընթացում՝ այն դիտարկելով որպես անօրինական միգրացիայի դեմ պայքարի գործիքներից մեկը:

2024թ.-ին ռեադմիսիոն համաձայնագրերի նախապատրաստման, կնքման և վավերացման գործընթացը շարունակվել է, մասնավորապես՝

- ✓ ՀՀ կառավարության 2023թ-ի հուլիսի 6-ի որոշմամբ հավանություն է տրվել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի ստորագրման առաջարկությանը:
- ✓ 2024թ. -ի հունվարի 15-ին ՀՀ ազգային ժողովը վավերացրել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի դաշնային կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման վերաբերյալ արձանագրությունը», որն ուժի մեջ է մտել 2024թ. մայիսի 1-ին:
- ✓ Ուկրաինայի, Ղազախստանի, Մոդովայի, Իսլանդիայի, Չեռնոգորիայի, Ալբանիայի համաձայնագրերը գտնվում է քննարկման փուլում:

ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2024թ. -ի ընթացքում Եվրամիության և Ռուսաստանի Դաշնության հետ կնքված ռեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում ստացվել և սահմանված կարգով ընթացք են տրվել 473 **ռեադմիսիոն հայցերի**՝ 790 անձանց մասին, որից հաստատվել է 690-ի ՀՀ քաղաքացիությունը: Ստացված հայցերի թվով առաջատար երկիրը կրկին Գերմանիան է՝ 275 հայց, 506 անձանց մասին, որից հաստատվել է 437 անձի քաղաքացիությունը, այնուհետև՝ Ֆրանսիան, որտեղից ստացվել է 94 հայց, 112 անձանց մասին, որից հաստատվել է 104 անձի քաղաքացիությունը:

Ռեադմիսիոն հայցերի վիճակագրությունը 2018-2024թթ



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

Դրական պատասխանների տոկոսը հաշվարկվում է տարվա ընթացքում քաղաքացիությունը չհաստատված անձանց թվի և քաղաքացիությունը հաստատված անձանց թվի ընդհանուր գումարից: Հայցերում նշված անձանց թվի և քաղաքացիությունը հաստատված անձանց ու քաղաքացիությունը չհաստատված անձանց գումարի տարբերությունը դեռ նույնականացման գործընթացում գտնվող հայցերում նշված անձանց թիվն է:

2024թ. -ի ընթացքում դեպի Հայաստան կազմակերպվել են 7 չարթերային չվերթներ Գերմանիայից, Շվեդիայից և Ավստրիայից: Վերադարձվել են 114 քաղաքացիներ: 2024թ. -ի ընթացքում ՌԴ ՆԳՆ միգրացիայի հարցերով գլխավոր վարչության կողմից ստացվել և ընթացք են տրվել 29 տարանցման հայցերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքով Մոլդովայի Հանրապետության 43 և Գերմանիայի Դաշնության 2 քաղաքացիների տարանցման մասին:

2019թ-ի փետրվարից շահագործվող **Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի** միջոցով հետընդունման հայցերը ստացվում են եվրոպական 18 երկրների միգրացիոն հարցերով զբաղվող համապատասխան մարմինների կողմից: 2024թ. -ին համակարգին միացել են Նորվեգիան և Պորտուգալիան: Համակարգի շարունակական բարելավումներն իրականացվում են՝ հաշվի առնելով ԵՄ և հայկական կողմերի առաջարկությունները:

ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2024թ.-ին Հայաստան վերադարձած միգրանտների աջակցության ծրագրեր են իրականացրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Միգրացիայի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակը (ՆԻՖԳ/OFII), Կայուն զարգացման հայկական հիմնադրամը (ԿԶՀՀ/AF4SD), «Քվոլիֆայդ Սմարտ Էսիստանց» միգրանտների օժանդակության ՀԿ-ն, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն (People in Need), «Գործարար նախաձեռնությունների հզորացում և զարգացում» ՀԿ-ն (BIRD NGO), Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ/IOM), Միգրացիայի քաղաքականության մշակման միջազգային կենտրոնը (ՄՔՄՄԿ/ICMPD) և «Հայկական Կարիտաս» բարեգործական կազմակերպությունը:

ՀՀ կառավարության 2020թ. մարտի 19-ի N 336-L որոշմամբ հաստատված «ՀՀ վերադարձող (այդ թվում՝ հարկադիր վերադարձող) քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագրի» շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2024թ. ընթացքում աջակցություն է տրամադրել 8 շահառուի: Գործընկեր կազմակերպությունները 2024թ. -ին տարաբնույթ աջակցություն են տրամադրել շուրջ 1400 շահառուի:

2024թ. ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ և Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD/ՄՔՄՄԿ) աջակցությամբ տեղի են ունեցել **Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ֆորումի** երկու հանդիպումներ:

2023 թվականին Սփյուռքի գործերի գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից ստեղծված **Հայրենադարձության և ինտեգրման կենտրոնը** շարունակել է իր ջանքերը՝ խթանելու հայրենադարձությունը, աջակցելու հայրենադարձների արդյունավետ ինտեգրման գործընթացին և ակտիվ ներգրավմանը Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական, մշակութային և սոցիալ-տնտեսական կյանքին:

Յուրաքանչյուր հայրենադարձի կամ հայրենադարձության գործընթացում գտնվող շահառուի հետ աշխատում է կենտրոնի մեկ աշխատակից, ով խորհրդատվություն և գործնական աջակցություն է տրամադրում հետևյալ ուղղություններով՝

- ✓ քաղաքացիության և կացության կարգավիճակի ձեռքբերում
- ✓ անձնական գույքի տեղափոխություն
- ✓ առողջապահական հարցեր
- ✓ կրթամշակութային հարցեր
- ✓ սոցիալ-տնտեսական հարցեր
- ✓ զբաղվածություն և աշխատանքի թույլտվություն
- ✓ զինվորական հաշվառում
- ✓ իրավական ոլորտի հարցեր
- ✓ բիզնեսի հիմնում կամ տեղափոխություն

Կենտրոնը տրամադրում է նաև հայերենի անվճար դասընթացներ և անվճար ինտեգրացիոն սեմինարներ: 2024 թվականին կենտրոնը հրատարակել է հայրենադարձության վերաբերյալ համապարփակ ուղեցույց, որը պատրաստվել է Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից՝ Repat Armenia հիմնադրամի հետ համատեղ: Ուղեցույցը հասանելի է արևելահայերեն, արևմտահայերեն, ռուսերեն, անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն և արաբերեն լեզուներով:

2024 թվականին ամփոփվել է ԵՄ կողմից ֆինանսավորվող և 2021թ. -ից Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD/ՄՔՁՄԿ) կողմից իրականացվող **«ԵՄ-ն հանուն միգրանտների ներուժի օգտագործման՝ ի նպաստ Հայաստանի զարգացման»** (EU4IMPACT Armenia) ծրագիրը: 2021 -2024 թվականների ընթացքում ծրագրի համար հայտարարված 5 կոչով ծրագրին մասնակցելու համար ներկայացվել է 500-ից ավելի հայտ: Նախնական ընտրության արդյունքում ավելի քան 300 դիմորդներ ներգրավվել են IRIS Business Incubator-ի կողմից իրականացվող հատուկ հարմարեցված բիզնես թրեյնինգների և ուսուցման դասընթացների: Ծրագրի ընթացքում ընդհանուր առմամբ ստեղծվել և աջակցություն են ստացել 117 ձեռնարկութուններ Հայաստանի բոլոր մարզերում, այդ թվում Լեռնային Ղարաբաղից տեղահանված շահառուների կողմից հիմնադրված 13 ձեռնարկություն:

Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի և «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի (People in Need) համատեղ ջանքերով Միացյալ սոցիալական ծառայությունների սոցիալական աշխատողների և սպասարկող անձնակազմի համար մշակվել է **Ինտեգրման ձեռնարկ և վերապատրաստման մոդուլ**: Նախաձեռնության շնորհիվ ավելի քան 200 սոցիալական աշխատողներ հնարավորություն են ստացել վերապատրաստվել և բարելավել միգրանտներին և փախստականներին արդյունավետորեն աջակցելու կարողությունները:

«Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն ակտիվորեն աշխատել է նաև հայաստանյան ՔՀԿ-ների հետ՝ ենթադրամաշնորհներ տրամադրելով բռնի տեղահանվածներին, փախստականներին, աշխատանքային միգրանտներին և վերադարձող միգրանտներին սոցիալական ծառայություններ մատուցելու հարցում ՔՀԿ-ների հզորացման ու ՔՀԿ-կառավարություն համագործակցության խթանման համար: Ծրագրերն ընդգրկել են ծառայությունների լայն շրջանակ՝ հիմնականում կենտրոնանալով սոցիալական խնամքի, զբաղվածության և աշխատունակության աջակցության, հոգեսոցիալական օգնության և իրավաբանական խորհրդատվության վրա: Ենթադրամաշնորհների ուղղակի շահառու է հանդիսացել 1,500 անձ, որոնց մեծամասնությունը՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձինք:

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

ՀՀ կենտրոնական բանկի հրապարակումների համաձայն, դեպի ՀՀ ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների ծավալը 2024թ.-ին շարունակել է նվազել: Եթե 2022թ.-ին դրամական փոխանցումները կազմում էին երկրի ՀՆԱ-ի 9.4%-ը, 2023թ.-ին՝ 5.9%-ը, ապա 2024թ. ՝ ընդամենը 4.4%-ը: Ընդ որում, փոխանցումների ընդհանուր ծավալի նվազումը 2024թ.-ին տեղի է ունեցել թե՛ աշխատողների եկամուտների, թե՛ անձնական տրանսֆերտների և կապիտալ տրանսֆերտների նվազման հաշվին:

Դեպի ՀՀ 2018-2024 թթ. ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների կառուցվածքն ու ծավալներն ըստ վճարային հաշվեկշռի (միլիոն ԱՄՆ դոլար)



ՀՀ կենտրոնական բանկ

ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած <u>ոչ առևտրային բնույթի</u> փոխանցումների աշխարհագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրամական փոխանցումների ընդհանուր ծավալի նվազումն առավելապես պայմանավորված է Ռուսաստանից դրամական հոսքերի կրճատման հետ, ինչի բերումով փոխանցումների ընդհանուր ծավալում Ռուսաստանից փոխանցումների մասնաբաժինը 2022թ. -ի շուրջ 70%-ից 2024թ.-ին հասել է ընդամենը շուրջ 41%-ի:

ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած ոչ առևտրային բնույթի փոխանցումներն ըստ երկրների



ՀՀ կենտրոնական բանկ

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2024 թվականին Հայաստանը շարունակել է զարգացնել և ընդլայնել միգրացիայի ոլորտում բազմակողմ և երկկողմ ձևաչափերով միջազգային համագործակցությունը, որի նշանակալի իրադարձություններն ու ձեռքբերումներն ամփոփված են ստորև:

- ✓ Հունվարի 19-ին կայացել է **ԵՄ արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով ենթակոմիտեի 13-րդ նիստը**: Նիստի շրջանակներում անդրադարձ է կատարվել միգրացիոն քաղաքականության ոլորտում իրականացվող բարեփոխումների օրակարգին, ապաստանի ոլորտում առկա իրավիճակին, ինչպես նաև կարևորվել ՀՀ-ԵՄ միջև կնքված հետընդունման համաձայնագրի կիրարկման արդյունավետ ապահովումը: Շեշտվել է ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման երկխոսության մեկնարկի անհրաժեշտությունն ու կարևորությունը:
- ✓ Փետրվարի 13-ին հայկական պատվիրակությունը մասնակցել է **ՀՀ-ԵՄ գործընկերության խորհրդի նիստին**: Գործընկերության խորհուրդն ընդունել է ԵՄ հետ մուտքի արտոնագրերի ազատականացման երկխոսության մեկնարկի Հայաստանի պատրաստակամությունը և վերահաստատել է ԵՄ պատրաստակամությունը՝ շարունակելու իրականացնել լրացուցիչ քայլեր՝ դիտարկելով այդ ուղղությամբ հնարավոր տարբերակները: ԵՄ-ն ողջունել է Հայաստանի կողմից մուտքի արտոնագրերի դյուրացման և հետընդունման համաձայնագրերի կիրարկումը և խրախուսել է Հայաստանին՝ շարունակելու ջանքերն այդ ուղղությամբ:
- ✓ Մայիսի 6-7-ը Հայաստանում էր **Եգիպտոսի Արաբական Հանրապետության** պատվիրակությունը՝ ուսումնասիրելու վերադարձի և վերաինտեգրման հայկական փորձը: Պատվիրակության կազմում էին Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտաքին գործերի նախարարության, ներքին գործերի նախարարության, սոցիալական համերաշխության նախարարության պաշտոնյաները:
- ✓ Հունիսի 6-ին ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետն ընդունել է **Եվրոպական սահմանային և առափնյա պահպանության գործակալության (FRONTEX/Ֆրոնտեքս)** պատվիրակությանը: Պատվիրակության անդամները ներկայացրել են Հայաստանի հետ արդեն իսկ կատարված, ինչպես նաև՝ առաջիկայում ուրվագծվող համագործակցության ծրագրերը: Նոյեմբերի 25-ից 27-ը ԵՄ կողմից ֆինանսավորվող, ՖՐՈՆՏԵՔՍ-ի «Աջակցություն Հայաստանին վերադարձի հետ կապված հարցերում» գործողությունների ծրագրի շրջանակներում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դյուսելդորֆ քաղաքում և Վրաստանի Թբիլիսի քաղաքում կայացել է միջոցառման առաջին փուլը, որին մասնակցել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության 2 ներկայացուցիչներ:
- ✓ Սեպտեմբերի 23-ից 26-ը Մոլդովայի մայրաքաղաք Քիշնևում կայացել է **Պրահյան գործընթացի** 15-ամյակին նվիրված Բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումը: Միջոցառման ընթացքում ամփոփվել են 15 տարիների ընթացքում Պրահյան գործընթացի շրջանակներում իրականացված աշխատանքները և դրանց արդյունքները, ինչպես նաև

մասնակից երկրների կողմից՝ Գործընթացից իրենց ակնկալիքները առաջիկա ժամանակաշրջանի համար: Հայաստանի ներկայացուցիչը խոսել է Պրահյան գործընթացի շրջանակներում կազմակերպված բոլոր նախաձեռնություններին և միջոցառումներին Հայաստանի ակտիվ մասնակցության, ինչպես նաև Հայաստանի միգրացիոն քաղաքականության և միգրացիայի կառավարման համակարգի վրա դրանց կարևոր և դրական ազդեցության մասին Գործընթացին Հայաստանի ակտիվ մասնակցության շնորհիվ ամրապնդվել է ԵՄ կառույցների հետ համագործակցությունն ու կապերը, ընդլայնվել տարածաշրջանային համագործակցությունը: Պրահյան գործընթացը նաև հարթակ է ստեղծել մասնակից երկրների հետ կապ հաստատելու՝ հնարավորություն ընձեռելով տարածաշրջանում միգրացիոն քաղաքականության և միգրացիայի կառավարման լավագույն փորձի փոխանակման համար:

- ✓ 2022թ. հոկտեմբերի 27-ից Հայաստանը դիտորդի կարգավիճակով անդամակցում է **Եվրոպական միգրացիոն ցանցին (ԵՄՑ/EMN):** Ցանցի հետ համագործակցության շրջանակներում մշակվում են միգրացիոն ոլորտի վերլուծական և վիճակագրական փաստաթղթեր, կազմակերպվում փորձի փոխանակում: ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետի տեղակալը, ԵՄՑ հրավերով, 2024թ. սեպտեմբերի 24-27-ը Էստոնիայի մայրաքաղաք Տալլինում մասնակցել է ԵՄ երկրների անկանոն միգրանտների ժամանակավոր պահման կենտրոնների ներկայացուցիչների 6-րդ հանդիպմանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են կենտրոնների գործունեության հետ կապված մի շարք հարցեր:

- ✓ Հոկտեմբերի 21-ից 24-ը Ավստրիայի Հանրապետությունում տեղի է ունեցել **Վիեննայի միգրացիոն ամենամյա համաժողովը**, որին մասնակցել է նաև ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետը: Միգրացիոն քաղաքականության մշակման հարցերը քննարկելու համար համաժողովին մասնակցել են շուրջ 200 քաղաքական գործիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, փորձագետներ, ոլորտի մասնագետներ, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, ակադեմիայի և այլ ներկայացուցիչներ՝ աշխարհի տարբեր երկրներից: Հյուրընկալող կողմը Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնն էր (ICMPD/ՄՔԶՄԿ): Հայկական կողմը հանդիպել է ԵՄ ապաստանի գործակալության (EU Asylum Agency) տնօրենի հետ, քննարկել երկկողմ համագործակցության հարցեր, մասնավորապես՝ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության աշխատակիցների կարողությունների զարգացման համար դասընթացների կազմակերպման նպատակով ՝ ԵՄ ապաստանի գործակալության համապատասխան գործիքակազմն օգտագործելու հնարավորությունը: Քննարկվել են նաև ՄՔԶՄԿ-ի հետ հետագա համագործակցության ծրագրերը՝ հատկապես վիզաների ազատականացման շրջանակներում նոր նախաձեռնությունների իրականացման շրջանակում: Ազատության, անվտանգության և արդարադատության ոլորտում SS համակարգերի գործառնական կառավարման ԵՄ գործակալության (eu-LISA) ներկայացուցչի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել EU-LISA Գործակալության հետ հետագա համագործակցության, մասնավորապես՝ միգրացիոն գործընթացների թվայնացման, տվյալների բազաների և լայնածավալ SS համակարգ գործարկման, տեխնոլոգիական փորձի փոխանակման և այլ հարցերի շուրջ:

- Նոյեմբերի 11-ին Ներքին գործերի նախարարի գլխավորած պատվիրակությունը մեկնել է Հունգարիա՝ մասնակցելու **Բուդապեշտի գործընթացի 7-րդ նախարարական համաժողովին**: Համաժողովին մասնակցել են 50 երկրների կառավարությունների բարձրաստիճան պատվիրակություններ և ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Համաժողովին հաստատվել է նախարարների նոր Հռչակագիրը և դրա իրականացման 2025-2030թթ Գործողության ծրագիրը, որը թույլ կտա ընդլայնել և խորացնել մասնակից և դիտորդ պետությունների միջև միգրացիոն քաղաքականության և միգրացիայի կառավարման ոլորտում համագործակցությունը: Հունգարիա կատարած այցի շրջանակում ՆԳ նախարար Վահե Ղազարյանը հանդիպել է Հունաստանի միգրացիայի և ապաստանի նախարարին: Քննարկվել են միգրացիոն հոսքերի կառավարման, անօրինական միգրացիայի կանխարգելման, ինչպես նաև փոխգործակցության ընդլայնման հարցեր:

- Դեկտեմբերի 2-ից 3-ը Ժնևում տեղի է ունեցել **ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեի 114-րդ նստաշրջանը**, որի ընթացքում քննարկվել են Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի դրույթների իրականացման վերաբերյալ զեկույցները: Հայկական կողմը ներկայացրել է ՆԳՆ ոստիկանության բարեփոխումների ռազմավարության և 2020-2022 թթ. գործողությունների ծրագրի իրականացման և ազդեցության մասին տեղեկատվություն: Անդրադարձ է կատարվել նաև միգրանտների, փախստականների, ապաստան հայցողների, քաղաքացիություն չունեցող անձանց և տարբեր խոցելի խմբերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության վարած քաղաքականությանը: Հայաստանի պատվիրակությունը վերահաստատել է ՀՀ կառավարության հանձնառությունը՝ շարունակելու ժողովրդավարական բարեփոխումները՝ հասարակության բոլոր շերտերի համար ապահովելով տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրականացումը:

- 2024թ. սեպտեմբերի 9-ին պաշտոնապես մեկնարկել է **Հայաստանի և ԵՄ-ի միջև վիզաների ազատականացման երկխոսությունը**: Գործընթացի շրջանակներում դեկտեմբերի 11-ին ՆԳ նախարարի տեղակալը, Միգրացիայի և քաղաքացիության պետը և ծառայության աշխատակիցները հանդիպում են ունեցել Եվրոպական հանձնաժողովի Միգրացիայի և ներքին գործերի գլխավոր տնօրենի տեղակալի, ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավարի և ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ու Եվրոպական հանձնաժողովի մի շարք ներկայացուցիչների հետ: Հանդիպման մասնակիցները քննարկել են Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունում և, առհասարակ, միգրացիայի ոլորտում տեղի ունեցող մի շարք բարեփոխումներ: Անդրադարձ է կատարվել «Բնակչության պետական ռեգիստրի» մասին ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխություններին, որոնց նպատակն է ձևավորել անձի նույնականացման և իրավական ինքնության ամբողջական, վստահելի և ճշմարիտ աղբյուր, ինչպես նաև բարելավել քաղաքացիներին, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ու մասնավոր հատվածին տրամադրվող նույնականացման ծառայությունները և տվյալների որակը: Հայկական կողմը ներկայացրել է բիոմետրիկ համակարգի ներդրմանն ուղղված ՊՄԳ (պետություն-մասնավոր գործընկերության) ծրագրի մանրամասները և ընթացքը:

- 2024թ. -ի ընթացքում Ֆրանսիայի Հանրապետության Ստրասբուրգ քաղաքում անցկացվել են **Եվրոպայի խորհրդի միգրացիայի ոլորտը**

համակարգողների ցանցի հերթական՝ 9-րդ և 10-րդ հանդիպումները, որոնց մասնակցել է Հայաստանի ԵԽ միգրացիայի հարցերով ազգային համակարգողը:

- ✓ ԵՄ կողմից ֆինանսավորվող և Լիտվայի և Լատվիայի հետ իրականացվող **«Աջակցություն Հայաստանում իրավապահ մարմինների և անվտանգության ոլորտի բարեփոխումներին»** ծրագրի շրջանակում իրականացվել են մի շարք միջոցառումներ: ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կարողությունների զարգացման, թվայնացման, բիզնես պրոցեսների քարտեզագրման նպատակով ծրագրի շրջանակներում ՄՔԾ աշխատակիցները ճանաչողական այցերով եղել են Լիտվայում:
- ✓ 2024թ-ին մեկնարկել է **Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ/IOM) «Ամրապնդելով միգրացիայի ոլորտում քաղաքականության հիմքերի և կարողությունների արդյունավետ կառավարումը, Հայաստանում ապաստանի տրամադրման կառավարման զարգացումը և ՄՔԾ վերակազմակերպման աջակցությունը»** ծրագիրը: ՄՄԿ-ն ՄԱԿ Փախստականների գերագույն հանձնակատարի (ՓԳՀ) գրասենյակի հետ համատեղ վերոնշյալ ծրագրի շրջանակներում օժանդակելու է «Միգրացիոն հոսքերի կառավարման» և «Հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարման» ռազմավարական փաստաթղթերի մշակման աշխատանքներին:
- ✓ 2024թ-ի ընթացքում միգրացիայի և ոստիկանության բարեփոխումներին ուղղված ԵՄ կողմից ֆինանսավորվող աջակցության ծրագրի շրջանակներում **ՄԱԿ ՓԳՀ-ն** իրականացրել է մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ վերապատրաստման դասընթացներ, ապաստանի ընթացակարգերի թվայնացում, փախստականների օրենսդրության կատարելագործում, ապաստանի որակի բարձրացման և ընթացակարգերի մշակում, ինչպես նաև՝ տեխնիկական սարքավորումներով ապահովում և ապաստան հայցողների համար նախատեսված նոր կացարանի կահավորման և նպատակով գնումների հայտարարում:
- ✓ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետը աշխատանքային հանդիպումներ է ունեցել **Շվեդիայի միգրացիոն գործակալության և NIRAS միջազգային կազմկերպության** ներկայացուցիչների հետ: Հանդիպումներին մասնակցել են Միգրացիայի և քաղաքացիության ծառայության վարչությունների ղեկավարներ, միջազգային և հասարակական կազմակերպությունների գործընկերներ: Հանդիպումների նպատակն էր քննարկել Հայաստանում միգրացիոն ոլորտում իրականացվող բարեփոխումների համատեքստում առաջացող կարիքները՝ հաշվի առնելով, որ առաջիկայում մեկնարկելու է Շվեդիայի հետ միգրացիոն ոլորտում համագործակցության երկարաժամկետ ծրագիր: Հանդիպման ընթացքում Ծառայության ներկայացուցիչները գործընկերների հետ քննարկել են Հայաստանի միգրացիոն ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները, դրանց իրագործման ընթացքը: Կատարվել է ոլորտային կարիքների գնահատում: Քննարկվել են նաև միգրացիայի ոլորտային ուղղություններին վերաբերող խնդիրներ, որոնք առնչվել են նաև քաղաքականության մշակմանը: Շվեդիայի գործընկերները ներկայացրել են միգրացիոն գործակալության պատմությունը, գործող իրավական կարգավորումները՝ նշելով, որ նրանք ևս գտնվում են բարեփոխումների փուլում:

- ✓ 2023թ. սեպտեմբերից **«Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն (People in Need/PIN)** աջակցում է Միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը (ՄՔԾ) և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) Միավորված սոցիալական ծառայությանը (ՄՍԾ)՝ անցնելու հաստատված բարեփոխումների փուլը, ուժեղացնելու հաստատությունների կարողությունները և ապահովելու ավելի լավ ծառայություններ միգրանտներին և խոցելի բնակչությանը: Համագործակցության շրջանակներում կարևոր նախաձեռնություն էր **Միգրացիոն քաղաքականության երկխոսության հարթակի** ստեղծումը, որի նպատակն է կառավարական ներկայացուցիչների, քաղաքացիական հասարակության և հետազոտողների համախմբումը՝ քննարկելու միգրացիոն քաղաքականության զարգացումները և ոլորտային քաղաքական փաստաթղթերը: Ինստիտուցիոնալ բարեփոխումների և ՄՔԾ-ում նոր ստորաբաժանումների ձևավորման համատեքստում, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն կազմակերպել է մի շարք վերապատրաստումներ՝ ուղղված ծառայության աշխատակիցների նոր կարիքներին: «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն աջակցել է նաև ՄՔԾ քաղաքացիների խորհրդատվության և զանգերի կենտրոնի բաժնին՝ կենտրոնանալով աշխատանքային գործընթացների օպտիմալացման, հաճախորդների սպասարկման ապահովման և տեխնիկական կարողությունների զարգացման վրա: